ՏԱՔՈՒԿ ԶՄԵՌ

Նպատակ

Ապահովել անվտանգ տարածք Գեղարքունիք մարզի Մեծ Մասրիկ գյուղի երեխաների համար և աջակցել գյուղի տնտեսական զարգացմանը՝ ողջ տարին գործելու հնարավորությամբ ապահովելով տեղի թիվ 1 մանկապարտեզին:

Գործողություններ

- Փոխարինել Մեծ Մասրիկ գյուղի թիվ 1 մանկապարտեզի հին պատուհաններն ու դռները նորով
- Աջակցել գյուղի անասնապահության ու գյուղատնտեսության զարգացմանը աշնան և ձմռան ամիսներին՝ հնարավորություն տալով ընտանիքներին կենտրոնանալ իրենց կյանքի բարելավման վրա

Ծրագրի նկարագրությունը

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղն ունի 3500 բնակիչ, որի մեծամասնությունը Ադրբեջանից գաղթած հայեր են: Անասնապահությունն ու հողագործությունը գյուղացիների ապրուստի հիմնական միջոցներն են: Աշխատանքի պակասի պատճառով գյուղի շատ տղամարդիկ դիմում են արտագնա աշխատանքի՝ տեղափոխվելով Ռուսաստան, որտեղ աշխատում են կամ որպես շինարար, կամ վարորդ, որպեսզի կլոր տարին կարողանան պայմաններ ապահովել իրենց ընտանիքի և երեխաների համար:

Մեծ Մասրիկում բնակվող մոտ 250 երեխաների համար գործում է միայն մեկ մանկապարտեզ: Չնայած մանկապարտեզը վերանորոգված է, այն գործում է ընդամենը վեցը ամիս: Մանկապարտեզի դռներն ու պատուհանները շատ հին են, և ձմռան ամիսների խիստ ցուրտը պատուհանների և դռների անցքերից մտնում է ներս՝ սառեցնելով ամբողջ մանկապարտեզը, ինչի հետևանքով երեխաները ստիպված են աշնան և ձմռան ամիսներին մնալ տանը:

Այո-ի թիմը ունի անսահման մեծ ցանկություն և պատրաստակամություն անհրաժեշտ գումարը հավաքագրելու և Մեծ Մասրիկում բնակվող ընտանիքներին տաքություն և ուրախություն պարգևելու համար: Ձեր աջակցության շնորհիվ մանկապարտեզը կապահովվի նոր դռներով և պատուհաններով, ինչի այդյունքում երեխաներին տարվա բոլոր եղանակներին մանկապարտեզ հաճախելու հնարավորություն կընձեռվի: Մանկապարտեզի լիարժեք գործունեության շնորհիվ երեխաները կունենան կրթվելու և զարգանալու, ինչպես նաև դպրոցական կյանքը ավելի կայուն հիմքից սկսելու հնարավորություն:

Երեխաների համար տաքուկ և ապահով միջավայր ստեղծելով մենք նաև կօգնենք նրանց ընտանիքներին: Տանը երեխաների հետ մնալու փոխարեն գյուղացիներն աշնան և ձմռան ամիսներին ավելի շատ աշխատաժամանակ կունենան, ինչն էլ իր հերթին կավելացնի ընտանեկան եկամուտն ու հնարավորություն կտա զարգացնել գյուղի և համայնքի տնտեսական վիճակը:

Բյուջե

**Դռների և պատուհանների տեղադրման գումարը ներառված է:*

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Ք. ՄԵՏՐ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Դուռ - 2,7 x 0,82 *	4	8.84	60,000	530,400	1,117
Դուռ - 2,7 x 0,82 *	10	22.1	40,000	884,000	1,861
Պատուհան 0,85 x 1,72 *	10	14.6	37,000	540,200	1,137
Պատուհան 1,76 x 1,75 *	20	61.6	37,000	2,279,200	4,798

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 475 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

$8,913